ԿՈՍՏԱՆԴԻՆՈՒՊՈԼՍԻ ՀԱՅ ԳԱՂԹՕՋԱԽԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

(XV դ. II կես—XVII դ. I կես)

Պատմ. գիտ. դոկտոր ԱԼԲԵՐՏ ԽԱՌԱՏՅԱՆ

Բյուզանդական կայսրության անկումից հետո (1453) օսմանյան թուրքերի մայրաքաղաք դարձած Կոստանդնուպոլսին վիճակված էր հնամենի քաղաքակրթության փլատակների վրա ի նորոգ սկսել իր կենսագրությունը։ Բյուզանդական կայսրության անկմանը հետևող մի քանի տասնամյակների ընթացքում այստեղ, ի թիվս այլ հանրությունների, գոյացավ նաև հայ գաղթօջախ, որն իր կազմավորման գործընթացը պետք է ասպրեր հիմնականում մինչև 17-րդ դ. առաջին քառորդը՝ հանդես գալով իբրև ազգային որոշակի դավանանք, նկարագիր ու խառնվածք ունեցող հանրություն և դրան համապատասխան, ճանաչվելով իբրև առանձին ժողովուրդ՝ Օսմանյան կայսրության միլեթների համակարգում։ Պատմական ճակատագրի բերումով Կ. Պոլսի հայ համայնքը կազմավորվեց Հայաստանի Արևմտյան և Արևելյան հատվածների, ինչպես և Կիլիկիայի հայերի բազմություններից։ Այս գաղթօջախը, իբրև հայ ժողովրդի ընդհանրությունը ներկայացնող համայնք, բացառիկ նշանակություն պետք է ունենար միջնադարից մինչև նոր ժամանակները ձգվող դարաշրջաններում ազգային հոգևոր ու մտավոր արժեքների հայտնության ու զարգացման ասպարեզում։ Առնչվելով ոչ միայն բնաշխարհի, այլև աշխարհասփյուռ հայության հետ, Կ. Պոլսի հայ գաղթօջախը իր կարևորագույն նպաստը բերեց ազգային-հոգևոր մշակության, ժողովրդի ինքնության պահպանության գործին՝ իր էական ազդեցությունը թողնելով ազգի կրոնական, մտավոր ու մշակութային զարգացման ընդհանուր օրինաչափությունների վրա։

Հայտնի է, որ Կ. Պոլսում հայերն ապրել են Բյուզանդական կայսրության ժամանակներում, թուրքերի ներխուժումից դեռ դարևոր առաջ։ Անկախ համայնքը կազմող հայերի թվաքանակից, այն հանդես է եկել իբրև էթնակրոնական որոշակի միավոր՝ հոգևոր գլուխ ունենալով իր առաջնորդ-եպիսկոպոսին։ Այդ մասին թեև կցկտուր, բայց և հստակ փաստեր են տրամադրում ժամանակի հիշատակարանները։ Կ. Պոլիսը թուրքերի կողմից նվաճվելուց 146 տարի առաջ, Սսի եկեղեցական ժողովում (1307 թ.) հիշվում է Հուսիկը՝ «եպիսկոպոս Ստինպոլայ հայերուն»[1]։ Դրանից հետո ևս շարունակվում են հիշատակվել նաև այլ առաջնորդներ, ինչպես «Ի թվ. ՊԾԲ (1403) ի պարոնութեան Ամիր-Աբդալին և ի հայրապետութեան Կոստանդնուպոլսոյ արհիեպիսկոպոսի տէր Զաքարիայի ի գիւղն Մգունք...»[2]. նույն կերպ, հայտնի է 1433 թ. Կ. Պոլսի հայերի առաջնորդ Հովհաննես եպիսկոպոսը[3], իսկ դրանից հինգ տարի անց, մի ձեռագրում դարձյալ հաստատվում է առաջնորդի առկայությունը. «Գրեցաւ գիրքս ձեռնադրութեան թվ. ՊԶԻ (1438) ի վայելումն արհեպիսկոպոսին տէր Յովակիմին Կոստանդինուպալսի

---

1 Ա դ. Պ ա լ ճ ե ա ն. Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի Հայս. Վիէննա, 1878, էջ 281։

2 ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա (1401—1450), կազմ. Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1955, էջ 41։

3 Կ. Պոլսո հայերը և իրենց պատրիարքները.—«Ընդարձակ օրացույց ազգային Հիվանդանոցի», Կ. Պոլիս, 1901, էջ 77—78։

զոր տէր Աստուած վայելել տացէ յամերամս ժամանակաց...»[4]։ Այստեղ մի կողմ ենք թողնում այս Հովակիմի, Կ. Պոլսի հայերի առաջին պատրիարք Հովակիմի, ինչպես և Պրուսայի (1444), ապա Կուտինայի (1445) հայերի առաջնորդ Հովակիմի անձերի նույնության կամ տարբերության վերաբերյալ հայտնի տարակարծությունները[5]. խնդիրն այն է, որ վերոհիշյալ հիշատակարանները միաբերան վկայում են թուրքերի՝ բյուզանդական մայրաքաղաքում հայտնվելուց դեռ շատ առաջ հայ հոգևոր առաջնորդի, ուրեմն և համայնքի գոյության մասին։

Պակաս դժվարություն չի ներկայացնում այդպիսի գոյության շարունակականության հարցի լուսաբանումը, այսինքն այն, թե հայ համայնքը կարողացավ, արդյոք, պահպանել իրեն քաղաք ներխուժած թուրքական զորքերի սարքած նախճիրից, զանգվածային թալանից ու գերեվարումից հետո։ Դրա մասին, սակայն, որևէ փաստ հայտնի չէ, իսկ բուն Կ. Պոլսի (ի բաց առյալ նրա հանդիպակաց ափին գտնվող Գալաթիան, որը փրկվեց ավերածությունից ու գերեվարությունից) դժնդակ ճակատագիրը այս իմաստով միայն հոռետեսության է տրամադրում։

1453 թ. մայիսի 29-ին ներխուժելով քաղաք, թուրքերը վերջին մահացու հարվածը հասցրին պաշարումից, սովից ու հիվանդություններից ուժասպառ բնակչությանը, որի մի մասը կոտորվեց տեղում, իսկ մի զգալի մասն էլ գերեվարվեց[6]։ Հաշտված Կ. Պոլիսը դարձնելով օսմանների մայրաքաղաքը, սուլթան Մեհմեդ Ֆաթիհը սկսեց իրականացնել այն վերաշինելու, վերաբնակեցնելու և ծավալապաշտության ու իսլամի նպատակներին համապատասխան կենտրոն ստեղծելու ծրագիրը։ Անհրաժեշտ էր գրեթե ամբողջովին ամայացած քաղաքը լցնել բնակչությամբ, ապահովել նրա կենսագործունեությունը, որ հնարավոր էր միայն մարդկային մեծ ռեսուրսների առկայությամբ։ Կ. Պոլսի անկմանը հետևող մի քանի ամիսների ընթացքում սուլթանը ձեռնամուխ եղավ ոչ միայն թուրքերի, այլև նվաճված ոչ մահմեդական բազմությունների տեղափոխմանը Կ. Պոլիս, որ միայն իր թագավորության շրջանում, մինչև 1480-ականի սկիզբը, պետք է տևեր տասնամյակներ։ Մայրաքաղաքի վերաբնակեցման միտքը հղանալիս սուլթանը, անշուշտ, հետապնդում էր և՛ տնտեսական, և՛ կրոնաքաղաքական նպատակներ. իսլամի նոր կենտրոնում ապահովել մահմեդականների տիրապետող դիրքին համապատասխան մեծամասնություն, թուլացնել նվաճված տարածքների այլակրոնների՝ նրանց կարող և կենսունակ ուժերը բռնի Կ. Պոլիս տեղափոխելով, թալանել նրանց ունեցվածքը՝ ջլատելով ենթադրվելիք դիմադրական հնարավորությունները և այլն։ Հիմնավորված է այն տեսակետը, որ այս ամենը արվում էր նաև քրիստոնյաներից պարսլված շրջանները մահմեդական տարրերով լցնելու նպատակով[7]։ Գավառներից այս տեղահանումը սկսվեց բարբարոսական եղանակներով՝ բռնություններով, կողոպուտներով ու ավերումներով։ Աբրահամ Անկյուրացին արձանագրել է տեղահանվողների այս համատարած թշվառությունը.

---

4 ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ..., էջ 492։

5 Ն. Ակինյան. Կոստանդնուպոլսո հայոց պատրիարքության սկզբնավորությունը.— «Հանդես ամսօրյա», 1951, № 8—10, էջ 460—463։ Հ. Ճ. Սիրունի. Պոլիս և իր դերը (1453—1800). հ. 1, Բեյրութ, 1965, էջ 107—110 և այլն։

6 Վիթիսարի գրականությունն է ստեղծվել Կ. Պոլսի անկման վերաբերյալ։ Հայկական սկզբնաղբյուրներից հայտնի են Աբրահամ Անկյուրացու «Ողբ ի վերայ առման Կոստանդինուպոլսոյ» և Առաքել Բաղիշեցու «Ողբ մայրաքաղաքին Ստամպոլու» ստեղծագործությունները (Հ. Անասյան. Հայկական աղբյուրները Բյուզանդիայի անկման մասին. Երևան, 1957)։

7 Հ. Պերպերյան. Իսթանպուլի հայ բնակչությունը քաղաքին գրավումեն մինչև Ֆաթիհ Մեհմեդ II-ի մահը, 1453—1481.—«Հանդես ամսօրյա», 1962, № 5—8, էջ 220։

Զի հայրք յորդւոց բաժանէին Ի հայրենեաց բազումք զբրկին,
Իբսանրք ի սարցն կոչատին Եւ ոչ միայն տաճկաց ազգին
Եղբարքք յեղբօրէ կուքակին Այլ զբրիստոնէայսն ի մէջ բերին...8։

Նախքան բռնագաղթերին անցնելը, սուլթանը հույս է ունեցել հրաշքով և կամ էլ կամավորության սկզբունքով ևս վերաբնակեցնել Կ. Պոլիսը։ Սորաթուի իշխանությունները քաղաքը լքած բնակիչներին՝ հիմնականում հույներին, կոչ էին անում վերադառնալ իրենց տները, նույնիսկ խոստանում էին օգնել նրանց կացարանների վերաշինության։ Առանձնահատուկ վերաբերմունք ուներ սուլթանը նվաճված հարուստ խավերի, նույնիսկ անհատների նկատմամբ, երբ նրանց բերել էր տալիս Կ. Պոլիս։ Գերեվարված հույների մի մասը, անշուշտ, հարուստներ, ազատ արձակվեցին և բնակեցվեցին Ենիներ թաղամասում9։ Ակներևաբար, սուլթանը ձգտում էր օգտագործել ոչ միայն նրանց հարստությունը քաղաքը վերաշինելու նպատակով, այլև հեղինակությունն ու ազդեցությունը նրանց ազգակիցներին բարեհպատակության մեջ պահելու ակնկալիքով։ Այդպիսի բերվածներից էին նույն Աբրահամ Անկյուրացու «Ողբում» հիշատակված անկյուրացի հայերը, որոնք Կ. Պոլսում հայտնվել էին նրա անկումից մոտ հինգ ամիս անց և որոնց պետք է համարել Ստամբուլի առաջին հայ գաղթականներ.

Ի քսան և ութ հոկտեմբերին Եւ Սիմէոն Բարիփաշին
Չորս հայ ի յԱնկիւրիոյ բերին Եւ Պապայի որդի Այվատն
Աստուածատուր Սաթըմիշին Ն։ պարոն Գորգն հէշիմ հաճին10։

Այս չորս անձանցից հետո, համենայն դեպս, մինչև 1464 թ., Կ. Պոլսում՝ Գալաթիայում, արդեն հաստատվել են նաև բազմաթիվ անկյուրացի հայեր. հիշատակարանը, որ բերվում է ստորև, կցկտուր , բայց և որոշ տեղեկություններ է տալիս այդ մասին. «Ի թվիս Հայոց ՉԺԳ (1464)ապրիլ ամսոյ ԻԲ (22) եղև վերափոխումն տէր Ներսէս եպիսկոպոսին Անկուրիոյ. սա էր յերկրէն Ղրիմոյ, աշակերտ Սարգիս վարդապետի... եւ շնորհաւք սուրբ հոգոյն անդադար քարոզէր հայոց և ֆռանկաց, հոռմոց և բազումք ի մեծամեծաց տաճկաց լսէին զբանն կենաց և հաւատային ի Քրիստոս իսկ անաւրէն արքայն տաճկաց ժողովեց զքրիստոնէից մանկունսն և եբեր ըՍտըմպոլ իսկ եպիսկոպոսն նկեալ ի հետ մանկանցն և եբեր զթուղթ ազատութեան հայոց, իսկ անաւրէն արքայն ոչինչ համարեցաւ զթուղթն բայց Անկուրիոյ քրիստոնէքն շնորհեց նմա և յետ 9 (6) տարոյ տարան զծնաւղք մանկանց ի Ըստրմպոլ և գնացեալ սրբոյն զհետ նոցա ի Գալաթան...»11։

Վավերագրում ուշագրավ է հետևյալը. նախ, այն վերաբերում է Ներսես եպիսկոպոսի մահվանը (1464) նախորդած դեպքերին, երբ մանկաժողով է եղել Անկյուրիայում և ապա, այդ մանկաժողովից վեց տարի հետո է, որ ժողովված մանկանց ծնողներին տարել են Ստամբուլ, որ համապատասխանում է 1450-ականների երկրորդ կեսին կամ հենց 1454—1455-ին։ Հետևաբար, Անկյուրիայի այս գաղթականությունը ևս ներկայացնում է Ստամբոլի հնագույն հայ վերաբնակիչներին:

Սուլթանի՝ կամավոր գաղթի կոչերը, սակայն, դատապարտված էին ձախողման. վերաբնակվելը կապված էր նյութական մեծ ծախսերի հետ և որ-

8 Հ. Ա ն ա ս յ ա ն. Նշվ. աշխ., էջ 49։

9 L. K i n r o s s. The Ottoman Centuries. The Rise and Fall of the Turkish Empire. London, 1977, p. 116.

10 Հ. Ա ն ա ս յ ա ն. Նշվ. աշխ., էջ 49—50։ Անասյանը միանգամայն իրավացի է, երբ այս անձանց համարում է Անկյուրիայի երևելիներ (նույն տեղում, էջ 59)։ Գ. Հնասերը ևս կարծում է, որ նրանք կամ հարուստ վաճառականներ էին կամ ճարտար արհեստավորներ (Գ. Հ ն ա ս ե ր. Հայ վաճառականներ և արհեստավորներ Կ. Պոլսո մեջ.—«Հայաստանի կոչնակ», 1928, № 37, էջ 1161)։

11 Մաշտոցի անվ. Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ) ձեռ. 2549, թ. 266։

քան էլ հրապուրիչ լինեին սուլթանի խոստումները մայրաքաղաքում բարեկեցիկ կյանք ապահովելու, արտոնությունների և այլնի մասին, իրենց աշխատանքի համեստ վաստակով ապրող ժողովրդական խավերը ի զորու չէին այդ անելու։ Դավառներ ուղարկված սուլթանական սպառնալի ֆերմանները սոսկ մասնակի արդյունքներ տվեցին (նկատելի էր, այս տեսակետից, Սալոնիկից և Եվրոպայի այլ մասերից հրեաների գաղթը Կ. Պոլիս)[12], որ բնավ չէր կարող գոհացնել սուլթանին։ Դրանից հետո է, որ սուլթանը գործի դրեց բռնագաղթերի գործընթացը՝ սյուրգյունը[13]: 1450-ականների երկրորդ կեսին ծայր առան Կ. Պոլիս քշվող բազմությունների շարքերը՝ տասնյակ հազարավոր գաղթականներ էգեյանի շրջանից, Մորեայից, Կորնթոսից (հիմնականում հույներ), Արևելյան Եվրոպայից (սերբեր, հունգարներ, բուլղարներ և այլն), քրիստոնյաներ և մահմեդականներ՝ փոքրասիական նվաճված շրջաններից և այլն[14]։ 1460 թ., ինչպես գրում է ժամանակի հույն հեղինակ, իրողություններին քաջատեղյակ և ականատես Քրիտովուլոսը, Մեհմեդը Կ. Պոլիս տեղափոխեց իր տիրույթներում գտնվող այն հայերին, որոնք բարեկեցիկ էին իրենց ստացվածքով, տեխնիկական իմացություններով և այլևայլ մասնագիտություններով, ինչպես նաև նրանց, ովքեր առևտրական խավից էին[15]։ Արհեստավոր և առևտրական տասնյակ հազարավոր մարդկանց մայրաքաղաք բռնագաղթեցնելու ծրագիրը սուլթանը գործադրում էր շարունակական ընթացքով՝ տարածելով այն կայսրության բոլոր հպատակների վրա։ Պետք է եզրակացնել, որ Քրիտովուլոսի հիշած հայերը ևս արհեստավորներ ու առևտրականներ էին՝ Կ. Պոլիս բերված Կեսարիայից, Ադրիանուպոլսից, Սեբաստիայից, Սամսունից, Թոքատից և այլ վայրերից։

1461 թ. Կ. Պոլսում վերաբնակեցվեցին Պրուսայից եկած հայերը՝ իրենց առաջնորդ Հովակիմի (որը պետք է դառնար Կ. Պոլսի հայերի առաջին պատրիարքը) հետ միասին։ Ըստ Մ. Չամչյանի, Հովակիմը գաղթեցվել է «քանի մի երևելի տամբք հայոց (զոր ոմանք վեց տուն ասեն)»[16]. հայերի թիվը, սակայն, չի նշում Մաղաքիա Ծեվահիրճյանը, որը, ի դեպ, Չամչյանի աղբյուրներից մեկն է։ Նա գրում է. «Պուռսայու ժողովրդօք բերէ սուլթան Մէհէմէտ Ֆեթ՝ առնողն Ստամպոլու զոր յառաջագոյն խոստացեալ էր նմա թէ առնիցէ Ստամպոլ և տարցէ նա անդ»[17]։ Ի դեպ, նկատենք, որ և Անկյուրիայի, և Պրուսայի այս գաղթականներից հիշվում են միայն «երևելիները», ինչը ամենևին չի բացառում, որ նրանց հետ մայրաքաղաք տեղափոխված լինեին հասարակ արհեստավորներ և առևտրականներ։

Հայերի և մյուս ժողովուրդների հոծախումբ բռնագաղթերը Կ. Պոլիս լայն շափեր են ընդունում 1460—1470-ական թթ., երբ Մեհմեդը ծավալեց իր նվաճողական արշավանքները սևծովյան շրջաններում, Տրապիզոնում, Հունաստանում, Ղրիմում և Բալկաններում։ 1461 թ. գրավելով Տրապիզոնը և սևծովյան պոնտական շրջանները, Մեհմեդը կործանեց Տրապիզոնի կայսրությունը, որը հնարավորություն տվեց նրան քրիստոնեական նոր տարրերով լցնելու իր մայրաքաղաքը։ Գրիգ Ստեփանոսը իր հիշատակարանում նշում էր, որ նվաճողը «առաւ Պոնտոս, որ է Տրապիզոն և այնչափովն վնաս ի նոյն գործեցաւ, զի բաժանէին զորդիսն և զդստերս ի մարց և ի հարց և

---

12 L. Kinross. Op. cit., p. 117.

13 Հ. Պերպերյան. նշվ. աշխ., էջ 220։ Այս հեղինակը նշում է, որ Մեհմեդը հրամայել էր բաղաքի գրավումից հետո, մինչև սեպտեմբեր, գաղթեցնել 5 000 ընտանիք, իսկ հրաժարվողները մահվան պետք է դատապարտվեին (նույն տեղում, էջ 218)։

14 Նույն տեղում, էջ 224. Հ. Ծ. Սիրունի. նշվ. աշխ., էջ 175։ Ю. А. Петросян. Древний город на берегах Босфора. М., 1986, с. 136:

15 Kritovoulos. History of the Mehmed the Conqueror. Princeton, 1954, p. 140.

16 Մ. Չամչյան. Պատմութիւն հայոց. հ. Գ, Վենետիկ, 1786, էջ 500։

17 Հ. Պերպերյան. Կ. Պոլսո հայ պատրիարքներու դավանանագիրքը ըստ Մաղաքիա Ծեվահիրճյանի.—«Հանդես ամսօրյա», 1963, № 7—9, էջ 331։

գեղբայր յեղբարց և աղիողորմ էր լացն և աղաղակն, զոր ոչ կարեմ ընդ դրով արկանել...»։ Նույն գրիչը նշում է նաև Կամախի հայերի գերեվարումը. «Գերեցաւ գաւառս Դարանաղեաց որ է Կամախ որ ով կարէ պատմել զաւէրն և զպակասն որ եղեն քրիստոնէից և վանորէից և սրբութեանցն»[18]։ Գերեվարվածների մի մասը, անշուշտ, վաճառվել է, իսկ մյուս մասը բռնի տարվել է, իրրև ընչազուրկ ռայա, մայրաքաղաք՝ լրացնելով ներքնախավերի բանակը։ 1460-ական թթ. մեկը մյուսին հետևում էին նոր բռնագաղթերը, երբ Մեհմեդը պարբերաբար Կ. Պոլիս էր հավաքում կայսրության ամենատարբեր կողմերում բնակվող հպատակներին՝ մայրաքաղաքը հոծ բնակչությամբ լցնելը դիտելով իբրև իր պետության մեծության ու հզորության անհրաժեշտ պայման։ Այս իրողությունն էր արձանագրում լավատեղյակ գրիչը. «Եւ դարձեալ... ի դառն և անբարի ժամանակիս, զոր քրիստոնեայք տարաշիւարհիկ եղեալ սուրկուն բերելով սուլթան Մահամմատն ի յԲստամպոլ ոչ թէ յանկուրիոյ միայն, այլ յամենայն աշխարհէ, որ ընդ իւր իշխանութեամբն է...»[19]։

Ողբերգական էր Ղրիմի (Կաֆա) բնակչության, այդ թվում և բազմահազար հայերի գերեվարումը և բռնագաղթը Կ. Պոլիս։ Թուրքերը Կաֆան գրավեցին 1475 թ. հունիսի 5-ին (17—18-ին) և դարհուրելի սպանդի ենթարկեցին քաղաքի պաշտպաններին՝ հայ, մասամբ նաև հույն բնակչությունը։ Եվ այն բանից հետո, երբ թուրքական հույժ գերակշիռ ուժերին (40.000 մարդ) հետևեց ճենովացի իշխան Սկվարչիաֆիկոյի դավաճանությունը, պաշարվածները հարկադրված էին անձնատուր լինել[20]։ Կասկուտան փաշայի հրամանով թուրքերը դավադրաբար կոտորեցին մահմեդականությունը մերժած կաֆացի հայ երևելիներին, որից հետո սկսվեց հայերի կոտորածը ոչ միայն Կաֆայում, այլև Կաղարաթում և Սուրխաթում[21]։ Հայ, ճենովացի և հույն 40000 մարդ գերեվարվեց և քշվեց Կ. Պոլիս, սուլթանին ուղարկվեցին 1000-ի չափ դեղեցիկ աղջիկներ և պատանիներ, բազմահազար սպատանիներ ենիչերի դարձվեցին[22]։ Թուրքերը տիրացան Կաֆայի բնակչության ոչ միայն նյութական, այլև հոգևոր արժեքներին։ Կ. Պոլսում գնվել է մի ձեռագիր նույն՝ 1475 թ. մի հիշատակարանով. «Զվերջին սուացաւղ սուրբ Աւետարանիս զպարոն Աւետիքն յիշեսջիք հանդերձ ծնողովք, որ սուացաւ զսուրբ Աւետարանս ի յալլազգեացն, որ գերեաց ի Կաֆայէն և բերին ի յԲստամպալս։ Եւ ես Աւետիքս որ եմ տրապիզոնցի և եմ այժմ սուրկուն ի յԲստամպալս ի յԱյթոթոսիայի մահալան ի դուրն սրբոյ Սարգսի զաւրավարին»[23]։

Վերոհիշյալ խոշոր գերեվարումից ու բռնագաղթից հետո Կ. Պոլսի հայ բնակչությունը պետք է համալրվեր բազմահազար նորեկներով, անգամ եթե գերեվարված հայերի մի մասը վաճառվեր շուկաներում և դուրս տարվեր մայրաքաղաքի սահմաններից։ 15-րդ դ. վերջին քսաներորդին ղրիմահայերը կազմեցին հայ բնակչության մի ստվար մասը։

Մեհմեդի թագավորության վերջին տարիներին Կ. Պոլիս բռնագաղթեցին

---

18 Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Բ (1451—1480), կազմ. Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1958, էջ 211։

19 Թ. Գուշակյան. Ցուցակ հայերեն ձեռագրաց ս. Նշանի վանուց ի Սեբաստիա.— «Հանդես ամսօրյա», 1926, № 5—6, էջ 238։

20 Հայ-իտալական առնչություններ. ջենովական փաստաթղթերը ղրիմահայերի մասին (կազմ., առաջաբան և ծանոթագր. Վ. Ա. Միքայելյանի). Երևան, 1974, էջ 153։ Հ. Ճ. Սիրունի. Նշվ. աշխ., էջ 190։ Գ. Այվազովսկի. Պատմութիւն օսմանեան պետութեան. հ. Ա. Վենետիկ 1841, էջ 197—198: E. S. Creasy. History of the Ottoman Turks. Beirut, 1961, p. 99.

21 Մատենադարան, ձեռ. 4515, թ. 213։

22 Գ. Այվազովսկին գերեվարված հայերի և ճենովացիների թիվը հաշվում է 40 հազար (տե՛ս Գ. Այվազովսկի. Նշվ. աշխ., էջ 198), իսկ Համերը այդքան հաշվում է միայն հայերի թիվը, որ չափազանցված է համարում Հ. Ճ. Սիրունին (Հ. Ճ. Սիրունի. Նշվ. աշխ. էջ 192)։

23 Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Բ, էջ 389։

նաև Ամասիայի և Կարամանի հայերը։ 1480 թ. գրիչ Ներսես քահանան, որ Ամիրդովլաթ Ամասիացու հանձնարարությամբ ընդօրինակել էր «Ժամանակագրութիւնք Միխայիլի Ասորւոյ և Սամուէլի Անեցւոյ» գործը, գրում էր. «Ի մէջ դառնութեան դրեցի զսա, զի բռնութեամբ և ակամայ ի յԱմասիու զմեզ բերին ի Կոստանդինուպալիս»[24]։

Նկատենք, որ Մեհմեդը Կարամանի քաղաքները դրավել էր դեռևս 1464 թ., սակայն տեղի բնակչության, այդ թվում և հայերի բռնագաղթը իրականացրել էր 1479 թ.։ Դրիշ Մարտիրոսը, որ դարձյալ Ամիրդովլաթի պատվերով Սաղմոս էր ընդօրինակել, հիշատակարանում գրել է. «Դարձեալ ի թուականիս Հայոց ՉԻԸ (1479) սուրկուն արար իսոնտքարն զՂարամանին աշխարհին զհայ ազգս և զիս զանսլիտան հողս զՄարտիրոս, հետ բերին ի Կոստանդնուպոլիս»[25]։ Կարամանի ընդարձակ տարածաշրջանից կատարված բռնագաղթերը նշանակալի են եղել պոլսահայ գաղթօջախի կազմավորման գործընթացում։ Այս բազմամարդության մասին է խոսում այն փաստը, որ Կարամանի գաղթականները մայրաքաղաք հասնելուց հետո նախապես բնակվել են վրաններում, ուրեմն, հնարավոր չի եղել տեղավորել այդչափ բազմություն[26]։ Եվ վերջապես, այս գաղթականների թվաշատությունն է վկայում այն, որ Սամաթիայի եկեղեցու շուրջ բնակեցված հայաբնակ թաղը մինչև 1805 թ. կոչվում էր Կարաման մահալլեսի[27]։ Ե. Քյոմյուրճյանը 17-րդ դ. երկրորդ կեսին Սամաթիայում հաշվում էր ավելի քան հազար հայ («Հազար տունք յաւել աստ Հայք...»)[28]։

Ֆաթիհի բռնագաղթերը, ինչպես վկայվում է աղբյուրներով ու համապատասխան գրականության վերլուծություններով, իրականացվել է ոչ թե տարերայնորեն, այլ սուլթանի ու նրա մերձավորների նախապես կշռադատված ծրագրի համաձայն։ Պետք է նշել, որ այդ ծրագրի հետևանքով օսմանյան մայրաքաղաքը շինացվում էր շատ ավելի հին քաղաքակրթություն ունեցող, արհեստների, առևտրի և մշակույթի ասպարեզներում ակնհայտորեն առաջատար գաղթական ժողովուրդներով։ Պակաս կարևոր չէր նաև բուն մայրաքաղաքի կենսագործունեության ապահովումը հարկատու հոծ բազմություններով, որոնք տնտեսական ներուժով էին օժտելու մայրաքաղաքը, այլև հավելյալ միջոցներ էին տրամադրելու անընդհատ ռազմական ծախսերով մտահոգ օսմանյան պետությանը։ Ավելացնենք, որ սուլթանը ձգտում էր Կ. Պոլիսը շրջապատել գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող հողագործներով, նպատակ ունենալով մայրաքաղաքը դարձնել ինքնաբավ, սեփական կարիքները ամբողջովին կամ գրեթե ամբողջովին հոգալու ընդունակ մի համակարգ։ 1157 թ. Ֆաթիհը հատուկ ուշադրություն դարձրեց քաղաքի արվարձաններն ու շրջակայքը հողագործներով բնակեցնելու խնդրին՝ այնտեղ բռնագաղթեցնելով սերբերին և հույներին։ Կորնթացի հույներից շուրջ 4000 մարդու սուլթանը բնակեցրեց Կ. Պոլսի մերձակա հողերի վրա[29]։ Էյուպի մզկիթի կողմերում, ի դեպ, ծովեզերքին, այգիների ու բանջարանոցների մշակությամբ էին զբաղված նաև հայերը՝ բուլղարացիների հետ միասին, ինչպես նշում է Ե. Քյոմյուրճյանը.

---

24 Նույն տեղում, էջ 443։

25 Վ. Թորգոմյան. Հիշատակարան Ամիրտովլաթա Սաղմոսին.—«Հանդես ամսօրյա», 1895, № 8, էջ 247։

26 Գ. Հնասեր. Հայ դրականություններ տապանաքարերու վրա.—«Բազմավեպ», 1928, № 7—8, էջ 210։ Ա. Այպոյանճյանը կարծում է, որ Կարամանի հայերի այս բռնագաղթին (1479-ի) նախորդել են ևս երեքը՝ 1466, 1468 և 1470—1471-ին (տե՛ս Ա. Այպոյանճյան. Պատմություն հայ կեսարիոյ. հ. Ա, Կահիրե, 1937, էջ 585)։

27 Հ. Մրմրյան. Մասնական պատմություն հայ մեծատուններու. Կ. Պոլիս, 1909 էջ 21։

28 Երեմիա Չլէպլուոյ Ստամպոլոյ պատմութիւն.—«Հանդես ամսօրյա», 1909, № 4, էջ 99։

29 Kritovoulos. Op cit., p. 119, 136—137.

Ընդ սահմանօքս չատ են
պօստան, ուր պուլղար եւ հայ պարտիզպան...[30]

«Պուլղար» ասելով Քյոմյուրճյանը, ամենայն հավանականությամբ, նկատի ունի նաև սերբերին, որոնք Կ. Պոլսի շրջանի գյուղերում էին բնակեցվել Մեհմեդի ժամանակ[31]։

Մեհմեդի բռնագաղթերը, որոնք հետամտում էին Կ. Պոլսի վերաբնակեցումը, ի վերջո հասցրին Օսմանյան կայսրության մեջ միլեթների՝ կրոնական-ազգային հանրությունների համակարգի ստեղծմանը։ Մայրաքաղաքում ձևավորվեցին և ամբողջ երկրում պետականորեն ճանաչվեցին հունական ուղղափառ (հույներ, սերբեր բուլղարներ, 1453), հայ առաքելական եկեղեցու դավանության (1461) և հրեական միլեթները՝ իբրև հարկատու բնակչություն։ Միլեթների այսպիսի ճանաչումը, իրոք, նշանակում էր, որ օսմանյան իշխանությունները պետք է հրաժարվեին ոչ մահմեդական բնակչության ղանգվածային իսլամացումից, բայց սոսկ հարաբերական իմաստով. չպետք է մոռանալ, որ այդ իշխանությունները հարմար առիթներով դիմել են ղանգվածային բռնի իսլամացման՝ մայրաքաղաքից այն կողմ ընկած շրջաններում, բնավ հաշվի չառնելով միլեթների ճանաչումը սուլթանի կողմից։ Պետք է նկատել նաև, որ միլեթների համակարգը ոչ մահմեդականներին ընձեռում էր որոշ իրավունքներ՝ կրոնամշակութային, հարկահավաքման, ամուսնության և մի քանի այլ բնագավառներում[32], նպաստում դասային խմբերի ձևավորմանը (կղեր, արհեստավորներ, վաճառականություն, հողագործներ) և սոցիալական տարբերությունների խորացմանը համայնքի ներսում։

Մեհմեդի նախաձեռնած բռնագաղթերը վերսկսվեցին Սելիմ 1-ի (1512—1520) ժամանակաշրջանում, պարսկա-թուրքական ռազմական բախումներով։ 16-րդ դ. բռնագաղթերը ուղեկցվում էին գերեվարություններով, և անհրաժեշտ է դրանք տարբերել իրարից։ Բռնագաղթերը համախումբ բնակչության (մեկ կամ մի քանի վայրերից) տեղահանումն էր և տվյալ դեպքում, մայրաքաղաքում բնակեցնելը, ազատ թողնելով տեղահանվածներին որպես հարկատու ռայա ընդգրկվելու որևէ զբաղմունքի մեջ (արհեստներ, հողագործություն, կրոնական պաշտամունքի ասպարեզ, առևտուր)։ Գերիները, մինչդեռ, տրվում էին թուրքական բանակին, սուլթանից սկսած մինչև հետին ենիչերին՝ իբրև ռազմավար կամ հաղթանակի հատուցում։ Գերիները ամբողջովին զրկվում էին անձնական ազատությունից, դառնում էին տիրոջ սեփականությունը և դրան համապատասխան, որպես գույք, զանգվածային չափերով վաճառվում Կ. Պոլսի շուկաներում և այլուր։ Ա. Ալպոյաճյանի կարծիքով Սելիմ I-ը և նրա հաջորդները պալատի և ռազմական ծախքերը հոգալու համար պարսիկների դեմ մղվող պատերազմների ժամանակ մոտ 100 000 հայ գերիներ են վաճառել մասնավորապես եգիպտական գերեվաճառ շուկաներում[33]։ Կ. Պոլսի հայությունը գրեթե ամբողջովին կազմվել էր բռնագաղթերի հետևանքով, իսկ այն գերիները, որոնք գնվել էին մայրաքաղաքում, սոսկ պատահակա-

---

30 Երեմիա Չէլէպիի Կ. Պոլսեցւոյ Պատմութիւն Ստամպուլայ.—«Հանդէս ամսօրեայ», 1909, № 7. էջ 208,

31 А. Д. Новичев. Рабство в Османской империи в средние века:—В сб.: Проблемы социальной структуры и идеологии средневекового общества. 2. Л., 1978, с. 67.

32 М. С. Мейер. Новые явления в социально-политической жизни Османской империи во II половине XVII—XVIII вв.—В кн.: Османская империя, М., 1986, с. 160.

33 Ա. Ալպոյաճյան. Պատմություն հայ գաղթականության. հ. Գ, Կահիրե, 1961, էջ 155։

նորեն կարող էին պահպանել իրենց կրոնը, եթե իրենց հաջողվեր վերադառնալ սեփական էթնիկական միջավայր։

Կ. Պոլսի բնակչությանը գյուղատնտեսական արդյունքներով ապահովելու նպատակով Մեհմեդը մայրաքաղաքի մատույցներում տեղավորել էր ստրկացված գերիների. 1498 թ. այդ տարածքների սուլթանական կալվածքներում բնակվում էին երկու հազար ընտանիք ստրուկ-հողագործներ (ortakci kul-կիսաբար ստրուկ՝ բերքը հողատիրոջ հետ կիսելու իմաստով)[34]։

1514-ին գրավելով Թավրիզը, Սելիմ I-ը դարձյալ բռնագաղթերի նպատակն էր համարում պարսկական մարդկային ռեսուրսների նվազեցումը և մայրաքաղաքը արհեստավորներով ու առևտրականներով ապահովելու պահանջի հագեցումը, պահանջ, որը չէր նվազել, այլ ընդհակառակը, նորանոր խնդիրներ էր հարուցում օսմանյան իշխանությունների առջև։ Աճել էր քաղաքային պլեբսը, գաղթականների նորանոր խմբերը պետք է պարենով, բանվորական աշխատուժով, որակյալ շինարարներով և այլ արհեստավորներով ապահովեին մարդաշատ դարձած մայրաքաղաքը։ Պատահական չէ, որ օսմանյան դատաիրավական համակարգի մեջ բավական ընդարձակ տեղ է հատկացված Կ. Պոլսի շուկաների, արհեստավորների, առևտրականների գործունեության կարգավորմանը։

16-րդ դ. առաջին քառորդին, մասնավորապես Թավրիզի գրավումից հետո (1514) տեղի հայ արհեստավորների Կ. Պոլիս փոխադրումը նոր, արևելահայ որակական շեղում էր մտցնում այնտեղ։ Այսուհանդերձ, դժվար է կարծել, որ արևելահայ գաղթականությունը կարող էր մեծամասնություն կազմել համայնքում[35]։ Խնդիրն այն է, որ 1514 թ. սուլթան Սելիմը Կ. Պոլիս էր գաղթեցրել ոչ միայն Թավրիզի, այլև պարսկական գրավյալ տարածքների պարսիկ և հայ արհեստավորների բազմությանը, ուստի զուտ Թավրիզից բռնագաղթեցվածների վերաբերյալ վկայությունները պետք է հասկանալ ավելի լայն աշխարհագրական, հետևաբար նաև էթնիկական իմաստով, այլ կերպ ասած, խոսքը ամենևին էլ միայն հայերին, առավել ևս գաղթեցվածների մեջ հայերի մեծամասնությանը չի վերաբերում։ Մ. Չամչյանը, ի դեպ, այստեղ ազգային որևէ տարբերակում չի մտցնում։ «Իսկ սուլթան Սէլիմ հասեալ ի վերայ Դաւրիժոյ՝ էառ զայն և ժողովել զամենայն արուեստագէտս քաղաքին՝ առաքեաց ի Կոստանդինուպօլիս»,— գրում է նա[36]։

Որ Չալդրանի ճակատամարտից հետո (1514) Սելիմը հատուկ ուշադրություն է դարձրել Կ. Պոլսի արհեստավորների շարքերը համալրելուն, ընդգծում է նաև Գ. Այվազովսկին, սակայն, որոշ թվական պատկերացումներ տալով իրողության մասին. «Ապա առաքեաց ի Կոստանդնուպօլիս

---

34 А. Д. Новичев. Рабство в Османской империи в средние века, с. 67. Հայտնի է, որ XVI դ. Բերայի և Խասգյուղի շրջականներում հայերը զբաղվում էին 1978 с. 67. Հայտնի է, որ XVI դ. Բերայի և Խասգյուղի շրջականներում հայերը զբաղվում էին հողագործությամբ (Գ. Հնասեր. Հայ գրականություն տապանաքարերու վրա.— «Բազմավեպ», 1928, № 7—8, էջ 211)։ Արդյոք սրանք ունեցել են սոցիալական նշված կարգավիճակը՝ դժվար է ասել, որչափով առայժմ այս հարցը բավարարող տվյալներ մեզ հայտնի չեն։ Սակայն այն իրողությունը, որ Օսմանյան Թուրքիայում ստրկության գլխավոր աղբյուրը մնում էին Բալկանչիական պատերազմները Փոքր Ասիայում և Բալկաններում (А. Д. Новичев. Указ. соч., с. 57—58), ինչպես և Պարսկաստանից, Հայաստանի արևմտյան ու արևելյան հատվածներից կատարված բռնամթիվ դերեվարությունները XVI—XVIII դդ., ինքնին, առաջադրում են հայ գերիների և նրանց ճակատագրի ուսումնասիրության խնդիրը։

35 Ա. Ալպոյաճյան. Ազգային սահմանադրություն, իր ծագումը և կիրառությունը.— «Ընդարձակ օրագրույց ս. Փրկչյան հիվանդանոցի». Կ. Պոլիս, 1910, էջ 104։ Չմոռանանք, որ 1535 թ. Բաղդադի գրավմամբ դարձյալ բավական թվով հայ գաղթականներ հայտնվեցին Կ. Պոլսում, որ, սակայն, ամենևին էլ չէր ավելացնում արևելահայերի թվաքանակը։

36 Մ. Չամչեան. Նշվ. աշխ., հ. Գ., էջ 511։ Օրմանյան. Ազգապատում, հ. Բ, մասն Բ. Բեյրութ, 1960, սյուն. 2225։

արուհստագէտ ճարտարս հազար, յորս յոլովք էին ի մերմէ ազգէս»,— գրում է նա[37]։

Հայ բնակչության բռնագաղթերը և գերեվարումները շարունակվեցին մինչև 16-րդ դ. 80-ական թթ. վերջերը։ 1534 թ. Սուլթան Սուլեյման Կանունին (1520—1566) Կոստանդնուպոլիս և օսմանյան այլ տարածքներ բռնագաղթեցրեց Վան-Վասպուրականի շրջանի հայերի, այլև՝ Երևանից, Նախիջևանից և Արարատյան դաշտի շրջաններից ու Արցախից (1548 և 1554 թթ.)։ Ժամանակագրություններում բազմաթիվ վկայություններ կան Հայաստանը ամայացնող այս պատերազմների և գերեվարումների մասին։ Անդրեաս սարկավագը գրում է, որ «Ի թվին ՌԳ (1554) սուլտան Սուլայմանն սաֆար արաւ ի վերայ կարմիր գլխին և զՅերևանն և զնախչուան զամենայն գերի բերին», իսկ 1579 թ. մի հիշատակարանում նշվում է գերիների թիվը. «Թվին ՌԻԸ (1579) զերևան գերեցին ՌԼ (30000)»[38]։ Զանգվածային գերեվարությունները կրկնվեցին 1585 թ., երբ թուրքերը, այս էլ որերորդ անգամ, պարսիկներից գրավել էին Արևելահայաստանի մի նշանակալի մասը՝ Անդրկովկասի կից տարածքներով՝ Թավրիզը, Երևանը, Նախիջևանը, Գյանջան, Շամախին, Շիրվանը, զավթել Թիֆլիսը[39]։ Ավերիչ էր առանձնապես դրան նախորդած Լալա փաշայի արշավանքը 1578 թ., երբ օսմանյան զորքերը «ասպատակեալ գնացին դէպ յարեւելս՝ ի երկիրն կարմիր գլխոյ մինչ զքսան աւուր ճանապարհն աւելի ի Կարսա... յԵրևան, ի Շրուան և մինչ ի Թագաւորական մեծ քաղաքն Տփխիս։ Զայս ամենայն քաղաքս և գաւառս անմարդաբնակ արարին... և յաւուր միում գնացեալ ի վերայ Երևան քաղաքին և բերին գերի ոգիք ԻԴՌ (24 000) քահանայք և ռամիկք, կանայք և տղայք»[40]։ Ապշած գերեվարության ահռելի չափերից, հիշատակագիրը նշում էր, որ Երևանից, Էջմիածնից և կից տարածքներից «առհասարակ զամենեսին գերեցուցին»[41]։ Գերեվարվողների աննախընթաց թիվը մեկ անգամ ևս առիթ է տալիս նշելու, որ, անշուշտ, Կ. Պոլիս էին քշվում արհեստավորներն ու շինարարության համար պիտանի հայ, պարսիկ և այլ ազգության մարդիկ, բայց և հիմնական զանգվածը վաճառվում էր գերեվաճառ շուկաներում կամ տարվում երկրի խորքերը՝ Անատոլիա և այլուր։ Սրանով հանդերձ, համոզիչ է թվում, որ Կ. Պոլսի հայ ազգաբնակչության մեջ Արևելյան Հայաստանից շարունակական բռնագաղթերը պետք է ստվարացնեին արևելահայ գաղթականների թիվը՝ գոնե մինչև 16-րդ դ. վերջերը։ Այստեղ նկատենք, որ պարտադիր չէր արհեստավոր գերիներին Կ. Պոլիս և կամ այլ խոշոր քաղաքներ տեղափոխելը։ Նրանց հաճախ էին օգտագործում բանակի կարիքներին, ռազմական նշանակության շինարարական կառույցների և այլնի նպատակներով։ 1551 թ. թուրք զորահրամանատար «Վազիր փաշան բազում և անթիւ զօրոք և գնաց դէպ յարեւելս ի շահաստան, և յոյժ նեղեցին ու շարշարեցին զքրիստոնէայսն ի հարկաբահանութիւն։ Եւ հանին զբազում արհեստաւորս վասն շինութեան Ղարսայ բերդին...»[42]։

16-րդ դ. 2-րդ կեսին ինչ-ինչ չափերով շարունակվում էր նաև շինարարների, արհեստավորների և աշխատուժի հոսքը կամ բռնագաղթը նաև Արևմտահայաստանից։ Սարգիս դպիր Հովհաննիսյանը իր «Տեղագրութիւն մի Կ. Պոլսոյ» երկում նշում է, որ Սկյուտարի թաղամասում 1577 թ. բնակ-

---

37 Գ. Այվազովսկի. նշվ. աշխ., էջ 272։

38 Մանր ժամանակագրություններ, XIII—XVIII դդ. (կազմ. Վ. Ա. Հակոբյան), հ. I, Երևան, 1951, էջ 157, հ. II, Երևան, 1956, էջ 355։

39 Նույն տեղում, հ. I, էջ 173։

40 Նույն տեղում, հ. II, էջ 251—252։

41 Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց (կազմ. Ն. Եպ. Պողարյան) հ. 9 Երուսաղեմ, 1979, էջ 193։

42 ՄՄ. ձեռ. 6332, էջ 195։

վում էին մշեցի հայ գործավորներ։ 1617 թ. նրանց համար կառուցվել է ս. Կարապետ եկեղեցին[43], կնշանակի, մշեցիները պատկառելի թիվ են կազմել այդ թաղամասում, գոնե առանձին եկեղեցի ունենալու չափ։

Այսպիսով, մինչև 1590 թ. Ռուրք-պարսկական պայմանագիրը, որով Սահմանեց Հայաստանի տարածքների մի մասը մտնում էր Օսմանյան կայսրության կազմի մեջ, հայ ազգաբնակչությունը տասնամյակներ շարունակ ենթարկվել է դերեվարումների և բռնի տեղահանումների։ Սուսնց մի մասը, անկասկած, հասցարել է օսմանյան մայրաքաղաքում արևելահայ գաղթականների թիվը, որոնց հակակշռել են, ի դեպ, Արևմտահայաստանից տեղահանված և կամ գաղթած հայ ազգաբնակչության խմբերը։ Մի քանի տարի անց, 1590-ականի 2-րդ կեսից սկսվելու էր ջալալիների շարժումը, պատճառ դառնալով բռնի և կամավոր գաղթերի նոր և ահռելի մի հոսքի՝ դեպի սեծովյան շրջաններ, Ղրիմ, Արևելյան Եվրոպա, Օսմանյան Թուրքիայի ու Պարսկաստանի տարածքները և այլուր։ Ջալալիների շարժումը խոր հետք թողեց Օսմանյան կայսրության տնտեսական ու քաղաքական կացության վրա՝ առաջ բերելով ժողովրդագրական խոշոր տեղաշարժեր նրա տարածքներում բնակվող ժողովուրդների համար։

1598—1602 թթ. ջալալիների ավազակաբարո շարժման մեջ էին ներգրավվել բարձրաստիճան հողատերեր, փախստականներ, զինվորներ, ուղղացիներ և այլք, որոնք անասելի դաժանությամբ տակնուվրա արեցին ամբողջ Փոքր Ասիան, Օսմանյան Թուրքիայի արևելյան տիրույթները։ Խուսափելով ջալալիներից, Արևմտահայաստանի բազմահազար բնակչություններ որոնցից երկրով մեկ, անցան Ղրիմ, Զմյուռնիա, Կ. Պոլիս, Արաբական Բերակղզի, Արևելյան Եվրոպայի երկրներ և այլն։ Իբրև ջալալիների շարժման աղետալի հետևանք և ուղեկից, Արևմտահայաստանում սկսեց մոլեգնել սովը։ Ջալալիների հարվածների տակ 1602 թ., առաջիններից մեկը Արևմտահայաստանում, ընկավ Թոքատը։ Թոքատի գրավումը հատկանշվում է իբրև սկիզբ այն դանդվածային գաղթերի, որոնք ծայր էին առնելու Արևմտահայաստանից դեպի ապահով վայրեր՝ Կ. Պոլիս, Արևելյան Եվրոպա և այլուր[44]։ Մասնավորապես, դեպի Կ. Պոլիս գաղթը Արևմտահայաստանից սկսվեց 16-րդ դ. 90-ական թթ. երկրորդ կեսից՝ շարունակվելով ամբողջ 1600-ական թթ.։ Էրզրումի վիլայեթի հայ բնակչությունը տվեց գաղթականների առաջին հոսքերից մեկը, փախստականների մի մասը Կ. Պոլիս եկավ Երզնկայից, Կամախից, Ակնից, Տիվրիկից և կից շրջաններից։ Էրզրումի շրջաններից գաղթը սկսվել էր 1603 թ., ինչը վկայում է Գր. Դարանաղցին. «Եւ յորժամ ի Կաֆայէն Ըստամբոլ եկաք եւ ամենայն հայոց աշխարհն ի Թէոդուպոլսէն ի վայր, ոմանք երկու ամաւ յառաջ եկեալ էին. եւ ոմանք բաղումք ընդ մեզ եկին, որ էր թվ. ՌԾԴ (1605) եւ շատք այլ յետոյ եկին»[45]։ Ուրեմն, Էրզրումից և այլ վայրերից հայերը գաղթել են 1603 թ., իսկ մյուսները շարունակել են փախուստը ոեպի մայրաքաղաք նաև դրանից երկու տարի անց՝ 1605 թ.։ Նկատենք, որ 1608—1609-ին ջալալիների վերստին աշխուժացումը Արևմտյան Հայաստանում՝ ի դեմս Իբրահիմ, Մուստաֆա և Շերին բեկերի, Կալենդեր օղլուի և այլոց, պետք է որ առիթ դառնար գաղթական նոր հոսքերի, սակայն ոչ դեպի Կ. Պոլիս. գաղթականները հազիվ թե կարողանային մուտք գործել մայրաքաղաք, քանի որ նույն 1609 թ. այնտեղից սկսվել էր գաղթականների համատարած արտաքսումը, որին կանդրադառնանք քիչ անց։

1602 թ. մոտերքը Կ. Պոլիս անցան սովից և ջալալիներից խույս տված

---

43 Կ. Պոլսո հայերը և իրենց պատրիարքները.—«Ընդարձակ օրացույց ազգային հիվանդանոցի», Կ. Պոլիս, 1901, էջ 91։

44 Ջուլալյան. Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ. Երևան, 1966, էջ 163։

45 Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ. Երուսաղէմ, 1915, էջ 69։

թոքատցի հայ գաղթականները։ Ստեփանոս Թոքատեցին, որ գրել է ընդարձակ հիշատակարան և ողբ, իր հերթին արձանագրում է գաղթականների հանգրվանները.

Երբ չարն եկաւ յանկարծակի
Սև ծազրՁին ի Թոխաթի՝
Ցրվեց զամենն ոնց փոշի
Զրգեւ զամենն մի մի տեղի

Ոմանք գնացին յՀստամպօլի
Ոմն ի Պուրսայ, յԱտրանայի
Շատք գընացին յՈւռումէլի
Դրոանկաց տուն, Պուղտան, Լեհի[46]։

Շահ-Աբասի արշավանքների հետևանքով նաև արևելահայ գաղթականներ հայտնվեցին Բուրգիայի այլևայլ մասերում և Կ. Պոլսում։ Մի հիշատակարանում ասված է. «Նա թագաւորն Պարսից Շահապազն երեկ էառ զԵրեվան և զամենայն գաւարսն մինչև ի Բասեն և զամենայն աշխարհին հրձիգ և աւերակ սրար և զամենայն բնակիչքն թէ Հայք, թէ Տաճիկ... և մեք այլ ոչ կարացաք գնալ, այլ եկայք մերայնովքն ի Բուզանդիոն և ի Թրակացւոց աշխարհիս մինչև ցայժմ որ է թվն ՌՇԷ (1608)»[47]։ Պետք է եզրակացնել, որ Կ. Պոլսում այս գաղթականները հայտնվել են 1603—1604 թթ., ինչ ակնարկում էր Գր. Դարանաղցին[48]։ Արևելահայ գաղթականները Կ. Պոլիս, նաև Զմյուռնիա էին անցել Շահ-Աբասի բռնությունների և սովի պատճառով[49]։

16-րդ դ. 90-ական թթ. մինչև 17-րդ դ. սկզբների գաղթերը Կ. Պոլիս գրեթե աղետալի կացություն ստեղծեցին կայսրության և նրա մայրաքաղաքի համար՝ նույնիսկ ջալալիների ապստամբության պարտությունից տարիներ հետո Եսի Իրական վտանգ էր երկրի ծայր աստիճանի քայքայված վիճակը, գավառի ամայացման պատճառով գյուղատնտեսական արտադրության աղետալի չափերով անկումը և պետության համար հույժ վտանգավոր դարձած մայրաքաղաքի անվերահսկելի կացությունը։ Կ. Պոլիսը և նրա շրջակայքը լցված էին գաղթականների տասնյակ հազարավոր բազմություններով, որոնք մասամբ տեղավորվել էին պատահական որևէ ծածկի տակ, մասամբ էլ ապրում էին վրանների ներքո։ Մայրաքաղաքում միայն հայ գաղթական տների թիվը, ըստ Սիմեոն Լեհացու, հասնում էր 40 000-ի[50]։ Դժվար չէ պատկերացնել Կ. Պոլսի շնչահեղձ վիճակը, եթե նկատի ունենանք նաև այլ ազգությունների գաղթականների ահռելի թվաքանակը։ Մայրաքաղաքի իշխանությունների առջև ծառացել էին պարենային մատակարարման, փախստականներին որևէ կերպ տեղավորելու, համաճարակների դեմն առնելու հիմնահարցերը։ Մարդկանց ոչ արտադրողական, տեղահանված բազմությունների առկայությունը ծանրացնում էր քաղաքի գոյատևման բնականոն գործընթացը՝ արհեստավորներին նեղում էր հումքի պակասը, առևտուրը թուլացել էր գյուղատնտեսական արդյունքների պակասից, ինչպես և իրացման սուղ հնարավորություններից։ Հոգի սեփականատիրական համակարգի տված խոր ճեղքերը՝ սկսած 16-րդ դ. 2-րդ կեսից հասցրեցին նրան, որ մեծ չափերով արժեզրկվեր ոչինչ՝ օսմանյան դրամական միավորը[51]։

Նման պայմաններում սուլթան Ահմեդ 1-ը (1603—1617) հրամայեց մայրաքաղաքից վտարել և բնակության նախկին վայրերը քշել բոլոր գաղթականներին՝ երբեր տարվա տուրքից ազատելով նրանց[52]։ Սկսվեց 1609 թ.

46 Ն. Ակինյան. Հինգ պանդուխտ տաղասացներ. Վիեննա, 1921, էջ 120։

47 Նշիարք մատենադրության հայոց (հրատ. Ք. Պատկանյան). Ս. Պ-բուրգ, 1884, էջ 72։

48 Ժամանակագրութիւն Դոկտոր վարդապետի Կամախեցւոյ, էջ 69։

49 Դ. Խաչիկոնց. Կ. Պոլսո հայ գաղութին մագումբ.—«Ընդարձակ օրագրուց ազգային հիվանդանոցի», 1902, էջ 193։

50 Սիմէոն դպրի Լեհացւոյ ուղեգրութիւն. Վիեննա, 1936, էջ 8։

51 Օրհանի ժամանակ, որ առաջինն էր հատել աքչեն (1328), արծաթե այդ դրամը արժեր 6 կարատ, իսկ XVII դ. վերջին այն տասնապատիկ նվազել էր այդ արժեքից՝ դրեթե հավասարվելով պղնձին (Книга путешествия Эвлия Челеби, М., 1961, с. 272)։

52 Հ. Ն. Սիրունի. նշվ. աշխ., էջ 238։

սյուրգյունը՝ աքսորը, որի հարկադրական անհրաժեշտությունը օսմանյան կառավարողների համար ընդգծվում էր նրանով, որ իր բացառիկ և անվերապահ բնույթով կտրուկ հակասում էր օսմանյան օրենքներին։ 16-րդ դ. Կ. Պոլիսը առանձնահատուկ արտոնություններ էր ընձեռում փախստականներին։ Նրանք չէին վերադարձվում նախկին տեղերը[53]։ Սուլեյման Կանունիի (1520—1566) օրենքներից մեկում ասվում է. «Թիմարից հեռացած ռայաներին հավաքելը օրենք է։ Սակայն վերացված է տեղահանելը նրանց, ովքեր մի որևէ տեղում ապրել են տասնհինգ տարուց ավելի։ Հրաման է տրված քաղաքում գրանցել նրանց, ովքեր այնտեղ ապրում են քսան տարի։ Իսկ նրանց, ովքեր բնակություն են հաստատել Ստամբուլում, տեղահանելն արգելվում է»[54]։ Օրենքը ակնհայտորեն ցուցադրում է արտոնությունների միջոցով Կ. Պոլիսը վերաբնակեցնելու սուլթանների վաղեմի մտահոգությունները, որ առանձնահատուկ բնույթ էր հաղորդում մայրաքաղաքի ստատուսին։ Ջալալիների ապստամբության ժամանակաշրջանում և հետագայում օրենքը կորցրել էր իր բոլոր բանական իմաստները։

1609 թ. սյուրգյունը միայն Կ. Պոլիս եկածներին չէր վերաբերում, այլև ուրիշ քաղաքների ևս, որտեղ լցվել էին գաղթականների խմբերը, սյուրգյունի նպատակը կայսրության արևելյան գավառները կրկին մարդաշատ դարձնելն էր։ Աքսորն իրականացվեց արևելյան բռնապետությանը հատուկ դաժան ու անմարդկային մեթոդներով՝ ընտանիքի անդամներին իրարից բաժանելով, աքսորյալների ինչքի կողոպուտով և այլ բռնություններով[55]։ Հայ և թուրք գաղթականների մի ստվար զանգվածի հետ (7 000 մարդ) հարկադրված էր Կամախ վերադառնալ Գրիգոր Դարանաղցին[56]։

Այսուհանդերձ, գաղթականների մի մասը, դիմելով ամեն հնարավոր միջոցի, կարողացավ խուսափել վտարումից՝ գործի դնելով կապերը ազդեցիկ մարդկանց հետ, կաշառքը և այլն։ Մի զգալի մասը օգտվեց այն բանից, որ մայրաքաղաքը մշտապես զգում էր արհեստավորների, շինարարական բանվորների կարիքը։ Այդպիսիք «որպէս և բազումք աստ և անդ հնարեցան և կացին, ոմանք կաշառօք, և ոմանք յարքունի գործակալութեան աղագաւ ի շինումն տան աղօթարանի, որ ճամի ասէն՝ յանուն սուլթան Ահմատի կոչէն և շատք ի մեծամեծ իշխանաց հովանիս՝ ի ներքոյ թեւոյ ապաւինելով զերծան և այլ բազումք աստ և անդ յենլով՝ պատսպարեցան»[57]։

Անտարակույս, բնակչության տեղաշարժերը դեպի Կ. Պոլիս և այլ օսմանյան կենտրոններ շարունակվել են նաև 1610—1630-ական թթ., այնպես որ 1630-ականի կեսին ևս գոնե այստեղ վերստին ծառացավ գերբնակչության խնդիրը։ 1635 թ. սուլթան Մուրադ IV-ը (1623—1640) արձակեց նոր հրաման. Կ. Պոլսից աքսորել այն բոլոր եկվորներին, որոնք չէին լրացրել այստեղ ապրելու 40 տարին։ Հրամանը վերաբերում էր ոչ միայն վերջին տասնամյակներին Կ. Պոլսում հիմնավորված նոր գաղթականությանը. դա նշանակում էր նաև, որ դեռևս ջալալիների հուզումների շրջանից մայրաքաղաքում հաստատված գաղթականների մի զգալի մասը մնացել էր այնտեղ՝ կարողանալով խուսափել 1609-ի աքսորից։ Հռոմի պրոպագանդայի ժողովի (ս. Հավատոյ տարածման ժողով) արխիվից հայտնի է մի փաստաթուղթ, որ վերաբերում է 1635 թ. աքսորին։ Այնտեղ հայտնվում է, որ «Կ. Պոլսում հայերի դեմ մի հրովարտակ է ելած, որ այն հայերն, որոնց

---

53 Ю. А. Петросян. Османская империя. Могущество и гибель М., 1990, с. 104.

54 Аграрный строй Османской империи XV—XVII вв. (Документы и материалы. Сост., перевод и комментарий А. С. Тверитиновой). М., 1963, с. 35.

55 Մատենադարան, ձեռ. 4515, էջ 378։ Ն. Ակինյան. Ազարիա վ. Սասնեցի.—«Հանդես ամսօրյա», 1936, № 7—9, էջ 336։

56 Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ, էջ 148—149։

57 Նույն տեղում, էջ 145—146։

բնակությունը այս քաղաքում 40 տարուց ավելի չէ, դուրս հանվին և տարագրվին Փոքր Ասիա, մինչև որ նրանց թիվը իջնի 100 000-ի»[58]։ Մայրաքաղաքը լցվելու համեմատ մարդաթափ էր լինում թուրքական գավառը՝ դարձյալ անլուծելի խնդիրների առաջ կանգնեցնելով իշխանություններին։ Մ. Հայսմավուրքի հիշատակարանում ասվում է, որ սուլթան Մուրադը, որ գնում էր պարսիկների դեմ պատերազմի, «մինչ գնայր տեսեալ ղերկիրսն սակաւամարդս և հարցեալ տեղեկացեալ եթէ յԸստըմպօլ են ժողովեալ եւ առաքեաց հրաման ի տեսուչն յԸստըմպօլայ որ թէ հայ թէ յոյն թէ տաճիկ որք եկեալ են յարեւելից կողմանէ՝ զամենեսեան զնոսա փութով ի տեղիս իւրեանց առաքեսցէ»[59]։ Ավելացնենք, որ գավառում մնացած սակավաթիվ բնակիչները տարիներ շարունակ ստիպված էին վճարել նաև հեռացածների հարկերը, որ չափով հարկատու որոշակի միավորի (մուրաթտա) մատյանները, ըստ օսմանյան հարկային համակարգի հայտնի դանդաղաշարժության, տարիներ շարունակ չէին վերահաշվառվում։ 1635-ի մայիսի 19-ի աքսորի հրամանը դրվեց գործողության մեջ՝ մեզ արդեն ծանոթ բռնությունների և այլնի տեսարաններով։ Գ. Այվազովսկին նշում է, որ արտաքսման ենթակա եկվորները մեծ մասամբ հայեր էին, որոնք 30—40 տարի ի վեր ապրում էին Կ. Պոլսում[60], ուստի, պետք է կարծել, որ այս անգամ կրոնաէթնիկական մյուս հանրություններից առավել տուժել են հայերը։ Եվ դարձյալ, այս անգամ ևս, որպես հայերի տառապանքները մեղմացնող գործոն, հանդես եկան նրանց շինարարական ընդունակությունները. վերոհիշյալ Հայսմավուրքի հիշատակագրողը շարունակում է. «Իսկ մինչ այս ի գործս լինէր ի քաղաքին (աքսորը—Ա. Խ.) եկն այլ միւս հրաման ի նոյն արքայէն մինչ ի պատերազմի էր զի ի պարիսպն քաղաքին Ըստըմպօլայ նորոգեսցեն, որ և արարին իսկ, եւ ի պատճառս նորոգման պարսպին սակաւք ոմանք ազատեցան յարուեստաւորաց որք ի շինումն պարսպին վաստակաւորքն էին պիտոյ»[61]։

1635-ի այս վերջին աքսորից չպետք է մակաբերել, որ դադարել է գաղթականների հոսքը դեպի Կ. Պոլիս։ 17-րդ դ. 2-րդ կեսին ևս, այս կամ այն քանակությամբ, առանձին ընտանիքներով կամ անհատներով մայրաքաղաք են անցել Արևմտահայաստանից եկած հայ գաղթականները։ Պատճառը սոցիալական բռնություններն էին, սաստկացած հարկահանությունը և այլն։ 1656 թ. հունիսին Ե. Քյոմյուրճյանը հիշում է Կ. Պոլիս եկած գաղթականներին, որոնք տեղահանվել էին «վասն նեղութեան և հարկապահանջութեան տեղեացն... վասն այսորիկ բազումք ելեալ ի տանց և ի բնակութեանց, թողեալ զայգի և զարտ, զհնձան և զկալ և զայլ ամենայն վայելչութիւն պարտէզից և բուրաստանից, զեզնիցն և զոչխարիցն և եկեալ բնակեցան աստ ի քաղաքս որ կոչիւր Կոստանդնուպոլիս»[62]։

Պատերազմների և գերեվարությունների պատճառով Կ. Պոլսում հայերի քիչ թե շատ զգալի խմբեր հայտնվեցին 1720—1730-ական թթ.։ Պարսիկների հետ նոր ընդհարումների ժամանակ Արարատյան դաշտից, Սյունիքից և Արևելահայաստանի այլ վայրերից, բռնի կամ կամավոր, Կ. Պոլսում հայտնվեցին հայերի նոր խմբեր։ Դրանք արդեն չէին կարող փոքրիշատ նշանակալի կնիք դնել Կ. Պոլսի հայ գաղթօջախի վրա, որը վերջնականապես ձևավորվել և իր ուրույն նկարագիրն էր ստացել 16-րդ դ. վերջին և 17-րդ դ. առաջին տասնամյակներին։

Ֆաթիհի ժամանակ Կ. Պոլիս բերված ժողովուրդները, այդ թվում և հայերը, հիմնականում բնակեցվում էին հայրենակցական խմբերով, որ թելադրվում էր բռնագաղթի տրամաբանությամբ. գաղթականների կուտակում-

---

58 Ս ա ր ո ւ խ ա ն. Հոլանդան և հայերը—«Հանդէս ամսօրեայ», 1927, № 3—4, էջ 182։

59 «Բանասեր», Փարիզ, 1904, հ. Զ, № 3—4, էջ 174։

60 Գ. Այվազովսկի. նշվ. աշխ., հ. Ա, էջ 613։

61 «Բանասեր», Փարիզ, 1904, հ. Զ, № 3—4, էջ 174։

62 Օրագրութիւն Երեմիա Չելեպի Քէօմիւրճեանի, Երուսաղէմ, 1939, էջ 184։

ները միևնույն թաղում (կամ թաղերում) ամփոփում էր նրանց որոշակի տարածական սահմաններում, համախումբ դարձնում տվյալ էթնոկրոնական միավորը, որ նախընտրելի էր ոչ միայն վերջինիս համար (ազգային, կրոնական ընդհանրություն, միևնույն զբաղմունքի՝ արհեստների և այլնի գործառության ոլորտություն), այլև հեշտացնում էր օսմանյան կառավարողների գործը կարգուկանոնի, կառավարման իրացման՝ բնակչության հաշվառման, հարկեր գանձելու և այլնի իմաստով։

Մինչև Կ. Պոլիսը թուրքերի կողմից նվաճվելը հայերն զգալի խմբերով ապրել են Ղալաթիայում[63], որ վկայվում է նաև տեղի ս. Սարգիս եկեղեցու առկայությամբ։ Հ. Ճ. Սիրունին, հենվելով 1360 և 1361 թթ. երկու հիշատակարանների վրա, հաստատապես կարծում է, որ հնագույնը ս. Սարգիսն է,, որին հետևել է ս. Լուսավորիչը[64]։ Բուն Ղալաթիայում ևս հայերը բնակվում էին առանձին թաղերում,, ինչը հայտնի է դառնում հնագույն երեք վագֆիյեներից[65]։ Կ. Պոլսի հայությունը, ինչպես հայտնի է, 15—18-րդ դդ. ճանաչված էր իբրև ալթը ջեմաաթ՝ վեց համայնք, բնակվելով համապատասխան թաղերում։ Սրանք հետագայում կոչվել են օղալար (Գարակյոմրյուկ, Մալթա, Ջարշենպեհ, Թեֆեե, Քյոմյուրճի, Ախոռ գաբու), որոնց Ինճիճյանը ավելացնում է ևս մեկը՝ Թոփխանե օղալարը[66]։ Հետագայում, նոր գաղթականների հայտնվելով, հայերը տարածվել են տարբեր թաղերում՝ խախտելով ավանդական բնակության սահմանները և հիմնականում խմբվելով քաղաքային եկեղեցիների շուրջ։ Կ. Պոլսի հնագույն և շատ քիչ հայտնի եկեղեցիներից էր ս. Ստեփանոսը, որը հիշվում է Ամիրդովլաթ Ամասիացու «Բժշկարանի» հիշատակարանում՝ «վանից» ձևով[67]։ Դարձյալ հնագույն՝ Սամաթիո (հին հունարեն Պսամաֆիա անվանումը) ս. Գեորգ եկեղեցու շուրջ էին խմբվել Կարամանից գաղթեցված հայերը (1478), որի վեհությունը հիշում է Սիմեոն Լեհացին[68]։ Մինչև 1441 թ. ս. Գեորգը հայերի պատրիարքարանն էր (Սուլուոմանաստրրի ս. Գեորգ)։ 15-րդ դ. հիշվում են ս. Սարգիս եկեղեցին «ի յԱյթոթոսիայի մահալան»[69], ս. Սիկողայոսը (հունական Մանուելի մենաստանը), որ թուրքերը հետագայում մզկիթի վերածեցին Քեֆելի ճամի անվամբ, մինչ վրկված հայերը ոգի ի բռին աշխատելով ձեռք բերեցին Պալաթի ս. Հրեշտակապետ եկեղեցին[70]։ 1608-ին Կ. Պոլիս մտած Սիմեոն Լեհացին հիշում է մայրաքաղաքի հինգ հայ եկեղեցիներ՝ «ի Վլանկայ երեք՝ աւագն

---

63 Անկախ բուն Կ. Պոլսում և Ղալաթիայում բնակվող հայերի թվական համամասնության բավական կնճռոտ խնդրից, այստեղ նշենք միայն, որ նախքան Կ. Պոլսի անկումը, Ղալաթիայում նշանակալի թվով հայություն էր ապրում՝ վկայված ոչ միայն նշված եկեղեցիների, այլև այն փաստի առկայությամբ, որ Կոստանդին Վահկեցի կաթողիկոսը 1438 թ. Ֆլորենցիայի տիեզերական ժողովի առթիվ երկու անգամ հիշատակում է Բերայի (Ղալաթիա) եպիսկոպոսի անունը՝ «Ցովակիսայ եպիսկոպոսի Բերիայ» և «զՑովակիմ Եպիսկոպոս Բերիայ» ձևերով. մեկը՝ ուղղված Թեոդոսիայում իր տեղապահ Սարգիս վարդապետին, և մյուսը՝ նույն քաղաքի սուլթանական տեղապահին, որից, կարծում ենք, կարելի է եզրակացնել ոչ միայն թեֆեցիների՝ Ղալաթիայում ունեցած ներկայության, այլև ս. Սարգսի կամ Ս. Լուսավորչի՝ Ղալաթիայի առաջնորդանիստ կենտրոն լինելու մասին (տե՛ս Ա. Պալճեան. Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի Հայս և միաբանութիւն նոցա ընդ Հռոմէական եկեղեցւոյ. Վիեննա, 1878, էջ 88—89)։

64 Հ. Ճ. Սիրունի. նշվ. աշխ., էջ 90, 94։

65 Հ. Պերպերյան. Իսթանպուլի հայ բնակչությունը..., էջ 428,

66 Ղ. Ինճիճյան. Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի. մասն երկրորդ, հ. Ե, Վենետիկ, 1804, էջ 115—116։

67 Հր. Տեր-Անդրեասյան. Իսթանպուլի առաջին հայկական եկեղեցիները և ս. Գեորգ պատրիարքանիստ եկեղեցին.—«Շողակաթ», 1995, էջ 99։

68 Սիմէոն զոյրի Լեհացւոյ ուղեգրութիւն, էջ 21։

69 Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. մասն Բ, էջ 389։

70 «Բանասեր». Փարիզ, 1899, գիրք Ա, էջ 48—50։

սուրբ Նիկողայոս, սուրբ Աստուածածին, և սուրբ Սարգիս, ի Պալատն մէկ և ի Սուլուսանաստրրն մէկ՝ սուրբ Գեորգ անուն»[71]։ Հեղինակը հիշում է նաև Ղալաթիայի ս. Լուսավորիչը[72]։ 17-րդ դ. վերջերին Կ. Պոլսի հայության պաշտամունքային հիմնական կենտրոններն էին մնում Ղալաթիայի ս. Լուսավորիչը, ս. Աստվածածինը, ս. Գեորգը, ս. Հրեշտակապետը և Սկյուտարի ս. Կարապետը՝ միակ նորը, որ կառուցվել է Զաքարիա պատրիարքի ժամանակ, 1617 թ.[73]։ Հիրավի, օսմանյան իշխանությունները, որոշ բացառություններով, ձգտում էին Կ. Պոլսում (և առհասարակ) թույլ չտալ եկեղեցիների ավանդական քանակի աճը։ Մեհմեդ Ֆաթիհի ժամանակ եղած եկեղեցիների թիվը (4) երկու դարից էլ ավելի ժամանակաշրջանում (1460—1680), երբ հայերի քանակը Կ. Պոլսում բազմապատիկ ավելացել էր, մեծացել էր ընդամենը 1-ով։ Անշուշտ, գործել նաև կարճակյաց եկեղեցիներ, ինչպես մի այլ ս. Նիկողայոս Հիսար Դիբիում՝ Ծնի Գաբուի մոտ, ս. Սարգիսը, որը 7 հունական եկեղեցիների հետ քանդել տվեց Քյոփրյուլյու վեզիրը[74]։ Առավել դյուրին էր սակավաթիվ բնակչությամբ թաղերի եկեղեցիները վերացնելը. 1766 թ. քանդվեց էյուբ թաղի ս. Ծղիա եկեղեցին, Զեշմելի օդալար թաղի ս. Աստվածածինը ևս «քանդեցին այլազգիք»[75]։ Իշխանությունները այս ամենը հիմնավորում էին նրանով, որ դրանք կառուցվել են առանց սուլթանի հրամանի։

Հայ գաղթականները 15—17-րդ դդ. հայրենակցական խմբերով էին ապրում հնագույն եկեղեցիների շուրջ։ Հայերի հնագույն թաղամասերից էր Սալմաթմրուկը, որտեղ ապրում էին Կաֆայի գաղթականները՝ ունենալով Զարիափան ս. Աստվածածին եկեղեցին։ Ըստ Հ. Ճ. Սիրունու, 1475 թ. Ղրիմից (Կաֆայից) գաղթեցված հայերը բնակվում էին Բյոյուք Դերեում և Պալատում[76]։ Կարամանից բռնագաղթեցված հայերը տեղավորվել էին Սամաթիայում՝ ս. Գեորգի շրջակայքում[77]։ Պրուսացի գաղթականները վերաբնակվել էին Ծնի Գաբուին կից Հիսար Դիբի թաղում՝ վերը հիշված ս. Նիկողայոս եկեղեցիով[78]։ Հայաշատ հին թաղամասերից էր Պալատը, որտեղ, ինչպես երևում է 1672 թ. մի ճաշոցի հիշատակարանից, նախապես բնակվել են

71 Սիմէոն դպրի Լեհացւոյ ուղեգրութիւն, էջ 7։

72 Նույն տեղում, էջ 25։

73 Կ. Պոլսո հայերը և իրենց պատրիարքները, էջ 91։

74 Հ. Ճ. Սիրունի. նշվ. աշխ., էջ 250։

75 Հավատին նախանձախնդիր թուրքերը տհաճությամբ էին նայում իրենց թաղում որևէ այլ հավատի կրոնական կառույցի գոյությանը, որ տարբեր կրոնաէթնիկական խմբերի տարանջատման գործոններից մեկն էր։ Կ. Պոլսի առումից հետո հույների առաջին պատրիարք Գեննադիոսը չկարողացավ իր ձեռքին պահել ս. Առաքյալների եկեղեցին, որ տվել էր նրան նույն ինքը՝ Մեհմեդը։ 1654 թ. ամռան կողմերը այս եկեղեցու բակում թուրքի դիակ հայտնաբերվեց, ակնհայտորեն դիտմամբ արված մի բան, որ թուրքերին առիթ էր տվել գրգռվելու։ Շրջահայաց Գեննադիոսը բարվոք համարեց կանխել թշնամանքը՝ թույլտվություն խնդրելով պատրիարքարանը տեղափոխել Ֆեներ թաղամաս, Պամմակարիստայի նախկին կուսանոցի տաճարը (С. Рансимен. Падение Константинополя в 1453 году. М., 1983, с. 141)։ Ուլու Մանաստրրի ս. Գեորգի մոտ մի նոր «քեշիշհանե» կառուցելը ևս զայրացրել էր թուրքերին. 1565 թ. թաղի բազմաթիվ բնակիչներ և թաղի իմամը բողոքել էին սուլթանին, թե իբր այդտեղ աղմկոտ գինարբուքներ են անում՝ խանգարելով ուղղափառների նամազը և ղուրանի ընթերցումը։ Սուլթանը հրամայել էր մայրաքաղաքի կադիին՝ բողոքը հիմնավոր լինելու դեպքում քանդել տալ «քեշիշհանեն» և արգելել բարեպաշտների անդորրը խանգարող երգերն ու գինարբուքը (Հ. Պերպերյան. Օսմանյան քանի մը վավերագրեր Իսթանպուլի հայոց եկեղեցիներն ոմանց մասին.—«Հանդես ամսօրյա», 1961, 10—12, էջ 727—728)։

76 Հ. Ճ. Սիրունի. նշվ. աշխ., էջ 204—205։ Ա. Ալպոյաճյան. Պատմություն հայ դպրոցի. հ. Ա, էջ 375։

77 Ղ. Ինճիճյան. նշվ. աշխ., էջ 132։

78 Նույն տեղում, էջ 133։

կամախեցիները։ Այստեղ Ե. Քյոմյուրճյանի ժամանակ ապրում էին մինչև 700 տուն հայեր[79]։ Պալատին կից խասգյուղում ապրում էին ակնցիները՝ զբաղմունքով քիրեմիտագործներ (կղմինդրագործներ), 1729 թ. այստեղ կառուցվել է ս. Ստեփանոս փայտաշեն եկեղեցին։ Դ. Խաչկոնցը կարծում է, որ Պալատի կողմերում նախապես «հաստատված կերևին» խարբերդցիները, Լանկայի (Վլանկա) և Գումգաբուի կողմերում՝ տիվրիկցիները[80] (դարձյալ Ակնի շրջանից)։ 17-րդ դ. սակավաթիվ հայեր էին ապրում Օրթաքյոյում, Իուրուչեշմեում, Խասգյուղում և Պեշիկթաշում. դրան համապատասխան այդ թաղերում գործում էին ժամատներ[81]։ Պետք է կարծել, որ բազմամարդ չեն եղել նույն ժամանակներում Բոսֆորում բնակվող գաբըրեի (ջորեպան, ջորեվաճառ) և ֆիրաեի (կրագործ) հայերը, ինչպես և հայ բոշաները։

16-րդ դ. Կ. Պոլիսն ուներ կես միլիոնից ավելի բնակչություն[82], որը ոչ թե բնական աճի, այլ շարունակվող բռնագաղթերի և գաղթերի հետևանք էր։ 17-րդ դ. այստեղ բնակչության թիվը հասնում էր 700—800 հազարի, որի մեծ մասը կազմում էին թուրքերը[83]։ Հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ կասկածելի է թվում Սիմեոն Լեհացու տվյալը, ըստ որի, 1608-ին Կ. Պոլսում հայերից «ութսուն տուն սեղացի հաղիւ գտանէր, բայց եկն և զարիսն աւելի, քան զքառասուն հազար տուն ի Ստամպօլ, Գալաթա և Սկյուտարն»[84]։ Ում է «տեղացի» համարում Սիմեոնը, արդյո՞ք Ֆաթիհի ժամանակից քաղաքում ապրող հայերին։ Բայց այս դեպքում էլ այդ «ութսուն տունը» չէր կարող հավանական լինել, քանի որ Դրիմից, Կարամանից, Ամասիայից, սեբաստացի և այլ շրջաններից քշված հայերի թիվը չէր կարող այդքան նվազ լինել՝ չհաշված առավել քիչ քանակությամբ գաղթականներ ենթադրող մյուս բռնագաղթերը։ Եթե անգամ եկվոր («եկն») և պանդուխտ համարենք 16-րդ դ. առաջին քառորդին Կ. Պոլսում հայտնված բազմաթիվ հայերին, ապա միևնույն է, 15-րդ դ. ի վեր մայրաքաղաքում ապրող հայ բնակչությունը չէր կարող կազմել ընդամենը ութսուն տուն, այլ շատ ավելի մեծ թիվ պետք է ներկայացներ։

Ջալալիների շարժման հետևանքով Կ. Պոլիս ապաստանած եկվոր բազմությունները շեշտակիորեն բարձրացրեցին հայերի թվաքանակը։ Հոռոմ ս. Հավատոյ տարածման ժողովի արխիվի փաստաթուղթը, որ վկայակոչեցինք վերը, ցույց է տալիս, որ 1635 թ. Կ. Պոլսում հայերն այնքան շատ են եղել, որ սուլթանը որոշել էր արտաքսումների միջոցով նրանց թիվը հասցրնել 100 000-ի։ Այս փաստը ամրապնդվում է ֆրանսիական դեսպանատան քարտուղար Դելակրուայի տվյալով այն մասին, որ 1673 թ. Կ. Պոլսի հայ գաղթօջախը կազմված էր 8000 տուն բնիկ և 50 000 հոգի պանդուխտ հայերից[85]։ Նույն դարի վերջին այս թիվը, անշուշտ, պետք է աճեր, թեև, ըստ Դելյերի, այդ ժամանակ Կ. Պոլսում կային 40 000 բնիկ և 50 000 գաղթական հայեր[86]։ Հետևաբար, 17-րդ դ. վերջին և 18-րդ դ. սկզբներին Կ. Պոլսում տեղացի և գաղթական հայերի թիվը հասել է մոտ 100 000-ի։

Այսպիսով, Օսմանյան կայսրության մայրաքաղաքում հայ գաղթօջախի կազմավորումը սկսվում է 1450-ականի 2-րդ կեսից, երբ այնտեղ վերաբնակեցվեցին Ֆաթիհ Մեհմեդի կողմից բռնագաղթի ենթարկված հայերը Ան-

---

79 Ր. Կյուլեսերյան. Կոլոտ Հովհաննես պատրիարք. Վիեննա, 1904, էջ 122։ Երեմիա Չելեպուոյ Ստամպոլոյ պատմութիւն.—«Հանդէս ամսօրեայ», 1909, № 6, էջ 172։

80 Դ. Խաչկոնց. նշվ. աշխ., էջ 194։

81 Երեմիա Չելեպուոյ...—«Հանդէս ամսօրեայ», 1909, № 9—10, էջ 306, 308, 301։

82 С. Рансемен. Указ. соч., с. 143.

83 Ю. А. Петросян. Указ. соч., с. 138—139.

84 Սիմէոն դպրի Լեհացւոյ ուղեգրութիւն, էջ 8։

85 Գ. Հնասեր. Հայ գրականությունը տապանաքարերու վրա.—«Բազմավէպ», 1928, № 7—8, էջ 213։

86 Հ. Մրմբրյան. նշվ. աշխ., էջ 49։

կյուրիայից, Պրուսայից, Կիլիկիայից, Կեսարիայից, Սեբաստիայից, ինչպես և սև ծովյան շրջաններից՝ Տրապիզոնից, Կաֆայից (Ղրիմ), Ամասիայից և Կարամանի տարբեր բնակավայրերից։ 1510-ական թթ. վերսկսված թուրքպարսկական պատերազմների հետևանքով 1514, 1548, 1554, 1578/79 թթ. Կ. Պոլսում հայտնվում են հայ գաղթականների նոր բազմություններ Թավրիզից, Արարատյան դաշտից՝ Նախիջևանից, Երևանից, դրանց հարող տարածքներից և Արցախից։

Ջալալիների շարժման ժամանակաշրջանում (1598—1609) Կ. Պոլիս անցան հայ նոր բազմություններ՝ ինչպես Արևմտյան, այնպես էլ Արևելյան Հայաստանի տարբեր շրջաններից, որոնք կազմեցին մայրաքաղաքի հայ գաղթականության նոր, նշանակալի շերտը։ 17-րդ դ. ընթացքում ևս շարունակվել են գաղթերը Արևմտահայաստանի տարբեր վայրերից դեպի Կ. Պոլիս, սակայն դրանք ունեցել են մասնակի բնույթ։

ОБРАЗОВАНИЕ АРМЯНСКОЙ КОЛОНИИ КОНСТАНТИНОПОЛЯ
(II половина XV в.—I половина XVII в.)

Доктор истор. наук АЛЬБЕРТ ХАРАТЯН

Резюме

История армянской колонии Константинополя (Стамбула) восходит не к истории константинопольских армян византийских времен, а ко второй половине 1450 г., когда в Константинополе появились первые переселенцы из Энкюри (Анкара), Бурсы, Каммаха, а также из черноморских регионов—Трапезунда, в частности, Кафы (Крым), Амасии и Карамана. Предпринятое при Мехмеде III насильственное переселение армян возобновилось в период правления его последователей на протяжении турецко-персидских войн. И на этот раз переселение было необходимо для обеспечения нормального функционирования османской столицы, т. е. для пополнения ее ремесленниками, купцами, богатыми людьми и налогоплательщиками. В 1514, 1548, 1554, 1578, 1579 гг. из подвластных Персии районов—Тебриза, Еревана, Нахичевана, Арцаха и т. д.—в Константинополь были переселены восточные армяне. Так возник второй слой армянской колонии Константинополя. Во время восстания джалали (1598—1609) в Константинополь хлынула волна переселенцев-беженцев как из восточной, так и западной частей Армении, образовав третий значительный слой армянского населения Константинополя, несмотря на то, что в 1609 и 1635 гг. эти беженцы подверглись массовому изгнанию (сюргюн) из столицы.

В городе армяне жили в определенных кварталах, земляческими группами и даже по роду профессиональной деятельности, сгруппировавшись вокруг своих церквей.